

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» ----- 2020թ.

N -----Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետը և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳ ՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի (այսուհետև՝ քաղաք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման գործընթացում խորհրդակցական նպատակով և հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) կազմավորման և գործունեության կարգի և լիազորությունների հետ կապված հարաբերությունները: Խորհուրդը ստեղծվում է Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված սոցիալական աջակցության տրամադրումն արդյունավետ իրականացնելու նպատակով:

2. Սույն կարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշմամբ:

3. Խորհրդի անդամ կարող է լինել չափահաս յուրաքանչյուր անձ՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից:

4. Խորհրդի անդամներին իր որոշմամբ, 1 տարի ժամկետով, նշանակում է Երևանի քաղաքապետը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, Երևանի ավագանու անդամների, ինչպես նաև հասարակական հիմունքներով սոցիալական պաշտպանության ոլորտում գործող միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու անհատ փորձագետների ներգրավմամբ: Փորձագետները պետք է ունենան սոցիալական պաշտպանության ոլորտում գործունեության առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ: Խորհրդի կազմում մեկ սոցիալական աշխատողի և իրավաբանի ներգրավումը պարտադիր է:

5. Հասարակական հիմունքներով միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների ներգրավումն իրականացվում է իրենց դիմումի համաձայն՝ հրապարակային հայտարարության հիման վրա, որի արդյունքում Երևանի քաղաքապետը կամ նրա հանձնարարությամբ համապատասխան տեղակալն իր հայեցողությամբ ընտրում է Խորհրդի անդամներին՝ մինչև սույն կարգով սահմանված անդամների առավելագույն քանակը լրանալը:

6. Հրապարակային հայտարարությունը տեղադրվում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում Խորհրդի անդամների նշանակումից առնվազն 15 աշխատանքային օր առաջ:

7. Խորհուրդը կազմված է 15 անդամից, որից 4-ը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, 3-ը՝ ավագանու անդամներ, 2-ը՝ միջազգային

կազմակերպությունների ներկայացուցիչներ, 3-ը՝ հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ և 3-ը՝ անհատ փորձագետներ:

8. Խորհրդի նիստերի գումարումը պայմանավորված է սոցիալական ծրագրերի քանակով և դրանք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց առնվազն ամիսը երկու անգամ: Խորհրդի նիստերը կարող են գումարվել նաև արտահերթ կամ հեռավար կարգով:

9. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են նշանակված անդամների առնվազն կեսը:

10. Խորհրդն ընդունում է եզրակացություններ, որոնք կրում են խորհրդատվական բնույթ, ինչպես նաև արձանագրություններ:

11. Խորհուրդը քննարկվող հարցերի շուրջ եզրակացությունն ընդունում է բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

12. Խորհրդի նիստերը գումարվում են Արգիշտի փողոց 1 հասցեում գտնվող Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում: Նիստեր կարող են գումարվել քաղաքի որևէ վարչական շրջանի վարչական շենքում կամ Խորհրդի նախագահի որոշմամբ՝ այլ վայրում:

13. Խորհուրդը Երևանի քաղաքապետի որոշմամբ նախագահում է Երևանի քաղաքապետի համապատասխան տեղակալը, որը նշանակում է Խորհրդի նախագահի տեղակալին և քարտուղարին: Խորհրդի նախագահի տեղակալ նշանակվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ոլորտը համակարգող վարչության (այսուհետ՝ վարչություն) պետը, իսկ քարտուղար՝ Խորհրդի կազմում ներառված վարչության աշխատակիցներից մեկը:

14. Խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է Խորհրդի նախագահին նրա բացակայության դեպքում: Խորհրդի նախագահի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է խորհրդի քարտուղարը:

15. Խորհրդի նախագահը՝

1) իրականացնում է Խորհրդի գործունեության ընդհանուր ղեկավարումը,

2) հաստատում է Խորհրդի նիստի օրակարգը,

3) հրավիրում է Խորհրդի նիստերը,

4) կազմակերպում է Խորհրդի գործունեությունը և ղեկավարում նիստի աշխատանքը,

5) ստորագրում է Խորհրդի նիստի արձանագրությունը և եզրակացությունը,

6) մասնագիտական աջակցության նպատակով մասնագետների ներգրավման համար դիմում է պետական, տեղական ինքնակառավարման կամ միջազգային մարմիններին:

16. Խորհրդի քարտուղարը՝

1) կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում Խորհրդի նախագահի հաստատմանը,

2) իրականացնում է նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի նախապատրաստումը,

3) ապահովում է մասնակիցների ներկայությունը՝ Խորհրդի նիստի օրակարգը Խորհրդի անդամներին ներկայացնելով նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տրամադրված էլեկտրոնային փոստերին համապատասխան նամակներն ուղարկելով,

4) պատասխանատվություն է կրում ներկայացվող նյութերի ամբողջականության համար,

5) վարում է Խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը,

6) կիսամյակը մեկ անգամ Խորհրդի անդամներին է ներկայացնում Խորհրդի գործունեության վերաբերյալ վերլուծություններ, մշտադիտարկման արդյունքներ և այլ տեղեկատվություն:

17. Խորհրդի նիստի օրակարգում լրացուցիչ հարցեր կարող են ընդգրկվել նիստից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ Խորհրդի նախագահի, տեղակալի կամ քարտուղարի կողմից:

18. Խորհրդի անդամն իրավունք չունի օրակարգում լրացուցիչ հարցեր ընդգրկել:

19. Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր կիսամյակ հրապարակվում է Երևանի պաշտոնական համացանցային կայքում՝ բացառելով սոցիալական աջակցություն ստացող անձանց անձնական տվյալների հրապարակումը: Խորհրդի ընդունած եզրակացություններն ու առաջարկությունները չեն հրապարակվում:

20. Խորհուրդը վարչությունից ստանում է սոցիալական ծրագիր (այսուհետ՝ ծրագիր)՝ անհրաժեշտ մասնագիտական, կազմակերպչական և ֆինանսական հիմնավորումներով ու փաստաթղթերով:

21. Խ ո ռ հ ու ը ղ ի ն ի ս տ ը , ն է ր առ յ ալ՝ հ ե ո ա վ ա ր , գ ու մ ար ե լ ու հ ամ ար Խորհրդի առաջին նիստի ընթացքում Խորհրդի անդամների կողմից ընդունվում է արձանագրություն, որտեղ նշվում են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնք համարվում են պաշտոնական: Խորհրդի անդամների փոփոխության դեպքում՝ Խորհրդի յուրաքանչյուր նոր անդամ իր մասնակցությամբ առաջին նիստի ընթացքում տրամադրում է իր էլեկտրոնային փոստի հասցեն՝ նիստերի մասին ծանուցումների ապահովելու համար:

22. Հեռավար նիստի դեպքում Խորհուրդը քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներ է կայացնում առցանց քվեարկությամբ՝ մասնակիցների ձայների մեծամասնությամբ: Խորհրդի անդամները հարցի վերաբերյալ իրենց որոշման մասին առցանց տեղեկացնում են Խորհրդի քարտուղարին՝ բանավոր կամ գրավոր:

23. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմն ըստ անհրաժեշտության աջակցում է Խորհրդի աշխատանքների կազմակերպման հարցում:

24. Խորհուրդը ծրագիրը քննարկելուց և համապատասխան որոշում կայացնելուց հետո երկօրյա ժամկետում վարչություն է ներկայացնում հիմնավորված բացասական կամ դրական եզրակացություն:

25. Բացասական եզրակացությունը կարող է լինել՝

1) ծրագրի մերժում, եթե այդ ծրագրի իրականացումը չի բխում կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորություններից, հիմնված է կեղծ, չհիմնավորված փաստերի վրա կամ հակասում է սոցիալական աջակցության նպատակներին կամ հիմնական սկզբունքներին,

2) ծրագրի վերադարձ՝ եզրակացությունում նշված թերությունները վերացնելու նպատակով:

26. Ծրագրի դրական եզրակացությունը, այդ ծրագիրը և կից փաստաթղթերը տրամադրվում են վարչությանը՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

27. Սույն կարգի 25-րդ կետի 2-րդ ենթակետում նշված եզրակացության մեջ առկա թերությունները վերացնելուց հետո լրամշակված ծրագիրը կարող է հաստատվել սույն կարգի 21-րդ կետով նախատեսված ընթացակարգով:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքապետը, օրենքով սահմանված սեփական և պետության պատվիրակված լիազորություններից բացի, օժտված է նաև ավագանու սահմանած կամավոր խնդիրների լուծմանն ուղղված լիազորություններով: Համայնքի կամավոր խնդիրները սահմանում է համայնքի ավագանին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքի խմբագրությամբ) 10-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով:

Սույն նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու կողմից սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու վերաբերյալ չափորոշիչները սահմանելուց հետո դրանց առավել արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով ստեղծել Երևանի քաղաքապետին կից համապատասխան խորհուրդ՝ գործընթացում հասարակական հիմունքներով ներգրավելով մասնագետներ և այլ շահագրգիռ անձանց:

Նշված խորհրդում սոցիալական աջակցության վերաբերյալ հարցերի քննարկումը հնարավորություն կստեղծի Երևանի քաղաքապետի կողմից առավել արդյունավետ որոշումներ ընդունելու համար, իսկ սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը կիրականացվի առավել թափանցիկ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծերի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծերի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առաջարկության, առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	որոշման նախագծի մեջ ուղղել վրիպակները «Լիազորություններ» բառի և 7 –րդ կետում «ներկայացուցիչներ» բառի վրիպակները, ինչպես նաև իրականացնել տեղեկանք-հիմնավորման տեքստում սրբագրական ուղղումներ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
2.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	15-րդ կետի 4-րդ ենթակետում «դրա» բառը փոխարինել «նիստի» կրկնում է 1-ին ենթակետի բովանդակությունը	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
3.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	15-րդ կետի 6 –րդ ենթակետում «միջնորդում» բառը փոխարինել «ղիմում» բառով	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
4.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	21-րդ կետում հստակեցնել, թե ինչպես է քարտուղարը նիստի մասին տեղեկացնում անդամներին, ինչ տեղեկատվություն է փոխանցում, ինչ եղանակով և ապահովում մասնակցությունը: Առաջարկում են թե՛ դեմառդեմ, թե՛ հեռավար նիստերի համար կիրառել ծանուցման նույն ընթացակարգը, խորհրդի անդամներին բոլոր նիստերի մասին ծանուցել էլեկտրոնային նամակով և նախապես ուղարկել օրակարգի հարցերի փաթեթները:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն

5.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	16 -րդ կետի 6-րդ ենթակետից հանել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի օգնությամբ իրականացված» բառերը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
6.	Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով	22-րդ կետի վերջում ավելացնել «բանավոր կամ ընտրված միջոցի տրամադրած հնարավորությամբ՝ գրավոր» բառերը:	Ընդունվել է, լրացվել են «բանավոր կամ գրավոր» բառերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ